տարածաշրջան

ԱՄՆ-Ը ԹՈՒՐՔԻԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՈՒՄ Է ԲԱՑԵԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՍԱՀՄԱՆԸ

ԱՄՆ-ը ցանկանում է, որ Լեռնային Ղարաբաղի հիմնահարցը լուծվի առանց բարդությունների: Այս մասին հայտարարել է Թուրքիայում ԱՄՆ-ի դեսպան Էրիկ Էդելմանը: Մասնակցելով Թուրքիայի պաշտպանության նախարարության կողմից կազմակերպած Ռազմական արդյունաբերության, ավիացիայի եւ նավաշինարարության 6-րդ միջազգային ցուցահանդեսին՝ Էդելմանը նշել է, որ Թուրքիան ԱՄՆ-ի համար կարեւոր երկիր է: Նա հատկապես ընդգծել է, որ ԱՄՆ-ը բարձր է գնահատում սեպտեմբերի 11-ի ահաբեկչական գործողություններից հետո Թուրքիայի կողմից ԱՄՆ-ին ցուցաբերած աջակցությունը: Էդելմանն ասել է, որ ԱՄՆ-ն իր հերթին կցանկանար օգնություն ցուցաբերել Թուրքիայի տնտեսական եւ քաղաքական հետագա ամրապնդման գործին: «Սա կարեւոր է նաեւ ԱՄՆ-ի համար»,- ասել է դեսպանը:

Ըստ նրա՝ Թուրքիան կարող է առաջնորդի դեր ստանձնել տարածաշրջանում: «Պարզապես Թուրքիան պետք է վերանայի ազգային շահերի իր հայեցակարգը»,- նկատել է Էդելմանը:

Դիվանագետը շեշտել է Թուրքիայի կողմից օր առաջ Հայաստանի հետ սահմանի բացման կարեւորությունը՝ միաժամանակ ասելով, որ Հայաստանն իր հերթին պետք է ճանաչի Թուրքիայի տարածքային ամբողջականությունը:

Էդելմանը չի թաքցրել, որ թուրք-ամերիկյան հարաբերություններում այսօր բարդություններ կան, եւ որ ինքը մեծ ջանքեր է գործադրում այդ բարդությունները հարթելու ուղղությամբ: Դեսպանը նաեւ հայտնել է, որ Թուրքիային տարածաշրջանում խաղաղության հաստատման գործում մեծ դեր է վերապահված, սակայն ամեն ինչ կախված է Թուրքիայից: Ըստ Էդելմանի՝ ահաբեկչության դեմ պայքարում ԱՄՆ-ը պատրաստ է համագործակցել բոլոր երկրների հետ, եւ կհամագործակցի Թուրքիայի հետ՝ ավարտին հասցնելու Իրաքի հյուսիսը ահաբեկչական խմբավորումներից «մաքրելու» գործը: «Դա կանդրադառնա նաեւ Իրաքի վերակառուցման վրա: Եվ ընդհանրապես, ԱՄՆ-ը կմնա Թուրքիայի ամենաուժեղ դաշնակիցը ահաբեկչության դեմ պայքարում»,- հավաստիացրել է դեսպանը:

Շարունակելով այս թեման՝ Էդելմանը ուշադրություն է դարձրել այն հանգամանքին, որ «ահաբեկչության դեմ պայքարում լուրջ խոչընդոտներ է առաջացնում Սիրիան»: «Սիրիան իր սահմաններն է բացում ահաբեկիչների առջեւ, ուստի մենք պետք է ուժեղացնենք մեր ճնշումն այս հարցում»,- ասել է ԱՄՆ դեսպանը: